

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆ

ՅԱՐԵԻՄՈՒՏՍ

(Տես յ'էջ 93)

Հայկական ուսմանց հետաքննութեան ախորժը մուտ գտաւ մինչև ի Շուետս, ուր Հենրիկոս Պրէննէր (1669-1732) Սպահանի մէջ բնակող իտալացի դոմինիկեան կրօնաւորի մը աջակցութեամբ հրատարակեց համառօտութիւն մը պատմութեան Մովսիսի խորենացւոյ ի Ստորհոլմ (1723):

ՅԱնգղիա հրատարակուեցաւ փառաւոր տպագրութեամբ՝ յամի 1736 այս գրոց բնագիրն ու լատինական թարգմանութիւնը. Mosis Choronenis... Historiae Armeniae libri III ի ձեռն գուլիելմի և Գէորգայ Ուիսթն եղբարց, որ Գուլիելմի Ուիսթն որդիքն էին: Խորենացւոյ պատմութեան բնագիրն առաջին տպագրութիւնն եղած էր յԱմսդերտամ ի 1695, իսկ նոյն հեղինակին ընծայուած Աշխարհագրութեանն յամի 1668:

Համառօտիւ նշանակենք արդ՝ հայկական ուսմանց նկատմամբ որչափ ինչ եղեր էր ի Գաղղիա յառաջ քան զիննևտասներորդ դար: Յիշեցինք յառաջ զանուն Լաբրոզի: Այս իմաստուն-բանասէր որ կոչուէր Մաթիւրէն վէյսիէ (Տըլաբրոզ) ծնաւ ի Նանթ Գաղղիոյ յամի 1661: Ուսմունքէ ձանձրացած, գնաց ի Կուատալուսի, միտք ունենալով վաճառականութեան տալ ինքզինքը: Հոն սորվեցաւ անգղիական, սպանիոլ ու փորթուգալի լեզուները: Ի վերադարձին ի Գաղղիա՝ ուսաւ զբժշկութիւն, յետոյ կրօնաւորեցաւ առ Բենեդիկտեանըս ի Սոմուր, և մեծաւորին (մանաւանդ վանական կարգաց) չուզելով և չկրնալով յարմարիլ՝ փախաւ ի Պալ, և ապա ի Պերլին: Մեծ ընդունելութիւն գտաւ այն քաղաքին մէջ, և Բրուսիոյ իշխանուհւոյն ուսուցիչ անուանեցաւ: Տեսութիւն ըրաւ Լայպնիցի հետ, որ քաջալերեց զինք յուսումն և ի հետազօտութիւն արևելեան լեզուաց: 1739ին հրատարակեց «Պատմութիւն քրիստոնէութեան յեթովպիա և ի Հայաստան» կոչուած գիրքը: Յօրինեց նաև հայկական լեզուի բառգիրք մը, որ երբեք պիտի չհրատարակուէր:

Այն ատեններուն ով որ փափաք ունենար լրջաբար հետեիլ հայկական լեզուի ուսման, հարկ էր որ նախ իրեն համար առանձինն բառգիրք մը պատրաստէր: Լաբրոզ իր յօրինած բառգրոց վրայ տաս-

ուերկու տարի անընդհատ աշխատեցաւ. և որ հիմայ Լէյտայի համալսարանին մատենադարանին մէջ պահուած է: Ուրիշն եղբարց շարագրածն ալ նոյնպէս ձեռագիր մնաց. ինչպէս նաև Լուռտէի յօրինած բառգիրքը (1729 — 1797) ի հայէ ի լատին, Լուռտէ հերթայականի ուսուցիչ էր ի Դպրոցն Գաղղիոյ. և իբրև զբաքննիչ՝ իրեն յանձնուեցաւ ուրիշ հայ բառգրքի մը քննութիւն՝ զոր հրատարակել կ'ուզէր հայրն Գաբրիէլ Վիլլաֆորեցի, նախկին առաքելական քարոզիչ մը, որ երեսուն տարի կեցեր էր ի Հայաստան: Այս գրուածքն յարմարցուած էր համանման ուրիշ երկասիրութեան մը վրայ, զոր յօրիներ էր հայրն Յովհաննէս Մկրտիչ ի Դոկսիչիոյ, մեծաւոր կարգի վեղարաւորաց ի Հայաստան: Հանդերձ այսու՝ Վիլլաֆորա գանգատեցաւ Լուռտէի վրայ, իբր թէ իր երկասիրութիւնը երկար ատեն քովը պահելով ընդօրինակած ըլլայ զայն, որպէս զի յետոյ իր անուամբ հրատարակէ: Լուռտէ նեղուած, իր այնչափ խնամքով յօրինած բառգրոց օրինակն առնելով՝ Վիլլաֆորի ներկայութեամբ կրակը ձգեց զայն: Իրեք տարի վրան անցնելէն ետքը՝ անխոնջ և բազմավաստակ Լուռտէ քահանայն՝ կրկին յօրինման ձեռք զարկաւ և գլխաւորեց, որ դժբաղդաբար չհրատարակուեցաւ: Ատեն անցնելէն ետքը՝ այս բառգրոց ձեռագիր օրինակը գնոց առաւ Պէլլոյ՝ որ նախկին աշակերտ մ'էր արևելեան կենդանի լեզուաց դպրոցին:

Լուռտէ ետեւէ եղաւ տպագրել զհայկական Աստուածաշունչն՝ լատին թարգմանութեամբ ու ծանօթութիւններով: Այս նպատակաւ քանի մը տարի կեցաւ ի Ս. Ղազար Վենետիոյ. բայց այսպիսի ձեռնարկ մը ի գլուխ հանելու ժամանակը պակսեցաւ իրեն: Ուսուցչութեանն աթոռը կ'առնիէ քահանային յանձնելէն ետքը, Գաղղիոյ մեծ յեղափոխութիւնն պայթեցաւ, և չուզելով երդումն տալ կղերականաց համար սահմանուած քաղաքական սահմանադրութեան, առանձնացաւ յիտալիա, ուր և վախճանեցաւ:

Հայկական բառագրութեան և Լուռտէ քահանայի վրայ աւելի տեղեկութիւն առնուլ ուզողը, կրնայ աչքէ անցընել Գաթրըմէրի մէկ յօդուածը ի «Տարեգիրք քրիստոնէական իմաստասիրութեան» (Annales de Philosophie chrétienne) ի յուլիսի 1839 տարւոյն:

Հետեւեալ հատուածով պիտի խօսինք իննևտասներորդ դարու մէջ եղած հայկական ուսմանց վրայ:

** Շրումբֆի այս համառօտ յիշատակութեանց վրայ՝ հարկաւոր կը համարինք յաւելուլ քանի մը տեղեկութիւն, ինչ որ յաջողեր է մեզ գտնել Վիլլաֆորա և Լուռտէ հայերենագէտ գաղղիացւոց վրայ, քաղելով ի մեր մատենադարանի պահուած յիշատակարաններէն:

Վիլֆոռայի վրայ եղածներն անով աւելի հետաքննականք՝ որ ինքնազիր տեղեկութիւնք են իր հայկական ուսմանց նկատմամբ, և երկրորդ՝ որ ինք կրնայ համարուիլ առաջին ի Գաղղիա մեր լեզուի հետամուտ և եռանդը վառող իր ազգակցաց մէջ, և որ քիչ ժամանակէն այնչափ փայլուն արգասիք պիտի արտադրէր: Իսկ Պրէննէրի, Ուիսթն եղբարց և Լաքրոզի վրայ՝ որ մեր պատմական մատենագրութեանց արևմտեայց ծանօթութեան այնչափ երախտապարտք են, առանձին յօդուածով մը կ'ուզենք խօսիլ:

Վիլֆոռուա՝ Սուրբ Գրոց բաղդատական ուսմանց սիրող և հետամուտ, երիտասարդ հասակէն ետևէ եղած էր յաջողութեամբ, բաց ի հերբայականէն, նաև արևելեան ուրիշ հին լեզուաց:

« Տղայ հասակէս, կ'ըսէ, մասնաւոր ախորժ և բուն բերում կը զգայի Սուրբ Գրոց ուսման: Տասուիրք տարուան էի երբ արդէն ծանօթ և ընտանի էին ինձ երբայցի տառք և նշանակք, և որոց հետամուտ էի և փութաջան: Բայց անկէ անդին չգնաց իմ յառաջադիմութիւնս. կամ այն պատճառաւ որ տղայական հասակ անհաստատ է ընդհանրապէս, և կամ առիթը կը պակսէր այդ բերմանս հետևելու: Հինգ տարի ետքը՝ ութնամսամեայ եղած ատենս, այդ ուսման կարևոր և անհրաժեշտ գրքերը գ'եցի, ամենայն ջանքովս այդ լեզուին պարապելու դիտաւորութեամբ: Սկսայ դաս առնուլ անձէ մը՝ որ լաւ հմուտ էր հերբայականին. բայց տասնուհինգ օրէն՝ ուսուցիչս չհամարձակեցաւ յառաջ վարել սկսած դասախօսութիւնը. որովհետև կը հակառակէր անոր հետորականին վարդապետըս: Դիմացս ելած այս արգելք՝ փոխանակ զիս Լքուցանելու, աւելի եռանդ մը վառեց յիս և մեծագոյն փափաք այս նուիրական լեզուին: Լոկ անձնական ջանքովս և հետապնդութեամբ՝ երբայցի լրծորդութեանց դժուարին ասպարէզը կտրեցի անցայ, և այնուհետև բոլոր կարելի եռանդեամբ տուի ինքզինքս յուսումն կիտից և անոնց փոխադրութեանց, և որով կը պարապէի 1709ին ծանր ձմերուան երկար գիշերները: Թանկագին ժամանակ մը՝ զոր շայեկանագոյն կերպով կրնայի գործածել Սուրբ Գրոց բնագիրն ուսումնասիրելով քան բարունեայ սնտեօք. բայց այն ատեն ուրիշ էր կարծիքս, ենթադրելով թէ առանց կիտից՝ հերբայականին ուսման շէնք կը կործանէր կ'իյնար:

« Ինչ ալ ըլլայ, քիչ ժամանակէն այնչափ եղաւ յառաջադիմութիւնս յընթերցման, որ ալ բուն սկզբնագրին վրայ կարող էի Սուրբ Գրոց ընթերցման պարապիլ: Բայց ամէն դիտութեամբս ալ՝ նկատմամբ կիտից, մերթ ընդ մերթ դժուարութիւնք կ'իւնէին դիմացս, որով և իմաստք անիմանալի կը մնային: Այն ատեն բնագիրը լուսաբանող մեկնըչաց հարկ կ'ըլլար դիմել. և կը տեսնէի որ որչափ մեկնիչք՝ այնչափ ալ տեսակք մի և նոյն տողին մեկնութեան. և հե-

տևաբար՝ այնչափ առիթք անստուգութեան ինձ համար: Հերբայա-
կանին հետ՝ կը զբաղէինք նաև հին պատմութեանց ժամանակագրու-
թեան և աշխարհագրիտական ուսման. որպէս զի կարող ըլլամ՝ Սուրբ
Գրոց իմաստից խելամտութեան աւելի պայծառ լոյս մը ծագուած
տեսնել: Քսանուերկու տարուան կը մտնէի ի թրոյս՝ ի մեծ դպրա-
նոցն եկեղեցական, հռչակահուն Տըլավիինի ձեռքին տակ, որ յե-
տոյ Սան քաղաքին արքեպիսկոպոսն եղաւ. ու երկու տարիէն պա-
տուեց զիս՝ ընդունելով ի փոքրիկ դպրանոց վիճակին. ուր աստուա-
ծաբանականին և հայրագիտութեան ուսումնասիրութիւնը, որոց
պարապեցայ ամբողջ չորս տարի, որչափ ալ չափի մէջ դբաւ հետա-
քննութիւնս Սուրբ Գրոց ուսման, բայց առանց կորուսանելու զայն
յաշայ և ի սրտէս: Քահանայական ձեռնագրութիւն և վարդապե-
տական աստիճանի տիտղոսն ընդունելով ի Պըզանսոն՝ ի վերջ կոյս
1716 տարւոյն, բարբաստագոյն գտնուեցայ այնուհետև բոլորովին
իմ հակամիտութեանցս և բերմանցս հետևելով մեծաւ եռանդեամբ
տալու ինքզինքս՝ իմ սիրելի ուսմանցս և պարապմանց:

«Փարիզ դառնալէս ետքը՝ մեր դարուն ամենամեծ մարդոց մէ-
կը, — և այս չէ իր բոլոր գովութիւնը, — ինձ պատուիրեց որ երբեմն
երբեմն փոքր մարգարէից գրքերն կարգամ իր առջևը՝ իրենց սկզբ-
քնագրին լեզուովը: Ըրած իմաստուն անդրադարձութիւններն և խո-
հական դատաստանք թէ քնագրին և թէ անոնց ամենէն աւելի մեծ-
անուն մեկնըչաց խօսքերուն, բացին աչքերս և իմացուցին թէ մի-
այն հերբայական լեզուին զիտութիւնը բաւական չէր զիտած վախ-
ճանիս հասնելու »:

Շարունակելով պատմել այն առթիւ քաղաքացի, արտաբ, ասորի,
եթովպական ու սպանիացի լեզուներու ուսմանն հետևիլը, կը յա-
ւելու. «Օր մը Ուոլթընի սուրբ գրոց բազմալեզու տպագրին յա-
ռաջաբան տեղեկութեանց 917 իջին յառաջին սեանն դրուած հե-
տևեալ տողերն աչքիս հանդիպեցան. Գրիգոր սկոլաստիկոս ասորի
կ'աւանդէ թէ ամենուն ծանօթ է որ Հայք՝ որչափ ալ ի յոյն լեզուէ
ըրած ըլլան աստուածաշունչ սուրբ գրոց թարգմանութիւնը իրենց
լեզուով, սակայն ասորականին հետ ալ համեմատեցին օրինակնին,
և որուն տեղ տեղ ալ համաձայնեցան: Ըստ զիպաց հանդիպելով
այս տողերուն, և որոց կրկին անգամ ընթերցումը աւելի ազդեցու-
թիւն ըրին վրաս, մէկէն զրավաճառի մը դիմեցի՝ հայերէն լեզուի
քերականութիւն և բառգիրք մը փնտռելով քովը: Վրան վեց ամիս
անցաւ առանց յաջողելու ձեռք ձգել ուղած գրքերս. վերջապէս մէ-
կու մը ձեռքով փափաքս կատարուեցաւ, 1729ին, և սկստյ անմի-
ջապէս աշխատիլ հայերէն լեզուին վրայ:

«Քանի ծանրագնի եղաւ ինձ առջի բերան՝ այս ահաբեկիչ (ter-
rible) լեզուն. որուն քով ուրիշ ամէն լեզուաց ուսումն, նոյն իսկ

արարականին, խաղալիկ մը կ'երևնար ինձ համեմատելով հայկականին հետ: Խիստ և ամենազժուարին հնչումն, բառեր՝ որ բոլորովին խուժադուժ (barbare) և անօրինակ կը թուէին. Ռիվոլայի պակասաւոր քերականութիւն մը. նոյն հեղինակէն շարադրուած բազիրք մը, քերականութենէն ալ անկատար, որովհետև պարունակած բառերն՝ վեցերորդն ալ չեն լեզուին ամբողջութեանն. և վերջապէս քրիստոնէական վարդապետութեան գիրք մը՝ այնչափ անհոգ և անմտադիր անձանց ձեռքով հրատարակուած, յորում չէ կարելի գտնել էջ մը ուր չվխտան իրարու կպած, կամ իրարմէ անջատ բառեր խառնուած շփոթուած իրարու հետ: Այս ամէն հանգամանք և զժուարութիւնք կարծես կը միաբանէին՝ ինչպէս դիւրին է գուշակել, նոյն լեզուին ուսումէն պաղեցընելով զիս ետ կեցընելու: Բայց կը ջանայի քաջալերել զիս, արժարծել վառել զհուր եռանդեանս, անոնցմէ ամենին շահաբեկելով: Տասը հոլովմունքը սորվեցայ, որոյ իւրաքանչիւրը տասը փոփոխութիւնք ունին. և ձգեցի ինքզինքս բայերու խոնարհմանց և անկանոններու մէջ որ բազմաթիւ են, և վեց ամէն աւելի անցուցի ի զժուարին նախակրթանս հայ լեզուի վերջապէս յաջողեցայ քիչ մը հասկընալ իմ քրիստոնէական վարդապետութեանս գիրքը. բայց իմանալով միանգամայն թէ անկարելի պիտի ըլլայ ինձ ալ աւելի յառաջագիտել սիրած լեզուիս ուսման մէջ այսպիսի անյաջող առաջնորդներով, գնացի (ի 1731) ի մատենադարանն արքունի, ուստի ի փոխ առի զօրինակ աստուածաշունչ գրոց: Այն օրուրնէն սկսայ երկու գործի մէկտեղ ձեռք զարնել. այսինքն՝ հայկական լեզուի լուրջ պարապման, հետևելով անգուլ ամէն օր յետ ճաշածամու, և թարգմանել զերգոց երգս Սողոմոնի, համեմատութեամբ ընթերցուածոց քաղաքացի, ասորի, յոյն, արաբ, եթովպացի և սպանիական կամ փերսաքսէսն թարգմանութեանց: Այս աշխատասիրութիւնս ներկայացուցի Սալիէ քահանային, որոյ դատաստանը մեծապէս կը յարգեմ, և որ ծանոյց ինձ թէ կը զըտնուին ի նմա բոլորովին նոր տեսութիւնք՝ որ ցարգ մէկէ մը զուրցուած չեն. և թէ խոհականութիւն չէր հրատարակելը այնպիսի ատեն մը՝ յորում ազատամիտք ամէն բանով կը զեզժանին: Իմ գործածած բացատրութիւնքս թէպէտև աւելի զգուշաւորք կը թուէին՝ քան ուրիշ թարգմանութեանց մէջ, սակայն Սալիէ խիստ գոգար գըտաւ: Ուստի իր իմաստուն խորհրդոց անսալով, յօժարակամ մէկզի գրի զայն, այնչափ սիրով՝ որչափ աւելի աշխատութեան կարօտութիւն կար իմ նոր գրութիւնս բացայայտելով՝ գոհացուցիչ ընթերցման արժանաւոր ընել զայն:

« Երգոց երգոյն վրայ սկզբնաւորեալ երկասիրութենէն հրաժարելովս՝ հայկական ուսմանս վնաս մը չեղաւ: Դարձայ միւսանգամ յարքունի մատենադարանն, ուր յաջողեցայ գտնել հայ լեզուի բառ-

գիրք մը . և ուրախութեամբ ընդունելով զայն՝ ուսմանցս սենեակն մտայ , նոյն օրուրնէ անոր գործածութիւնն սկսելով : Կարծածէս աւելի օգտակար եղաւ ինձ այն գիւտ : Հայ աստուածաշունչ մատենից վրայ ըրած երկամեայ և յարատև հետազօտութիւնք՝ բաւական ընդելացուցած էին ինձ նոյն լեզուին մէջ սովորաբար և յաճախակի գործածուած բառերն . իսկ նոր ձեռք ձգած բառերոցս օգնականութեամբ՝ հասկընալու վիճակի մէջ էի անոնցմէ գուրս մնացածները , և որ կարևոր էին ուսումն կատարելագործելու համար : Աշխատելու սէրս և եռանդ՝ յորդորամիտ ըրին զիս փարիզ քաղաքէն հեռանալ , ու հայկական լեզուի ուսման աւելի մտադրութեամբ պարապիլ : Աստուած աշունչը տեղը դարձնելով , առի ուրիշ գիրք մը՝ Հայոց հայրապետի մը երկասիրութիւն . ու վերադառնալով ի գիւղ՝ տեսայ որ ընտիր գրուածք մ'էր ձեռք ձգածս . Ներսէս Գ. մեծ հայրապետին Ընդհանրական թուղթն էր այն , զոր յաթոռն կաթողիկոսութեան բազմած ատեն ուղղեր էր առ ամենայն հայասեռ ազինս : Ետևէ էի ի թարգմանել զայն , բայց ոչ առանց ծանր վաստակոց . վասն զի ամէն իմաստ՝ նոր դժուարութիւն մը կը հանէր դիմացս : Արևելեան շատ ազգաց յատկաբանութիւնք (idiotisme) միանալով հայկաբանութեան ոճերու հետ , որոց դեռ այնչափ ծանօթացած չէի , կարծես ամենայն ճիգն ի գործ կը զնէին ետ կեցընելու յառաջադրեալ նպատակէս :

« Բայց որովհետև նախախնամութիւնն պատրաստեր ու սահմանած էր զիս այս գծնդակ աշխատանքին , նոր ձեռք բերած գրքերուս մէջ կը հանդիպէի այնպիսեաց ալ որ կրնային մի առ մի զիւրացընել ինձ առջևս երած ամէն դժուարութիւններ : Ներսիսի Շնորհալոյ Ընդհանրականին թարգմանութենէ ետքը՝ քաջալերուեցայ ի թարգմանութիւն սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հայ վարդապետի մէկ ճառին : Հեղինակին դժուարագոյն ոճը և գրութեան լեզուն՝ թելադիր եղան ինձ գէթ քիչ մը ատենուան համար ետ կենալ այս աշխատութենէն . բայց ապա դժուարութեանց առջև արիութիւնս կրկնապատիկ եղաւ . ու վեց ամսուան մէջ՝ օրը տասուերկու կամ տասնըչորս ժամ միակերպ աշխատելով , Ընդհանրական թուղթը և Նարեկացւոյ ճառը թարգմանեցի ամբողջ : Բայց այսպիսի յաջողութեան մը ուրախութիւնը շատ նուազեցաւ կրած քառամսեայ հիւանդութեամբս , և որ մերձեցոյց զիս ի գրունս մահու . և արգասիք էր այն յերկար պարապմանցս և անոր մէջ յաջողելու համար կրած աշխատութեան : Հազիւ քիչ մը տպաքինած , փափաքելի էր ինձի սիրելի հայկական լեզուի ուսման շարունակութիւնը : Բարեբաղդաբար այն տան մէջ ուր կը բնակէի՝ հայերէն քանի մի տպագիրք գտնուեցան : Կը գրադէի մերթ ընդ մերթ անոնց ընթերցմամբ . և երբ առողջութիւնս գտայ , սկսայ ասդիէն անդիէն հայերէն հատուածներ թարգմանել :

1734 մարտ ամսոյն՝ կրկին աչքէ անցուցի Շնորհալուոյ թղթոյն թարգմանութիւնը. և սկզբնագրին հետ բաղդատելով՝ շատ ճշդութեամբ եղած կը գտնէի, ու քանի մի սրբագրութիւններ ընելով՝ կը համարէի թէ տպագրութեամբ հրատարակուելու անարժան երկ մը չէր, և հաճոյական ընդունելութեան կրնար հանդիպիլ, իբրու նըմոյշ մը այն զրչագրաց՝ որոց յարեւելից ժամանումը արդէն հռչակուած էր ի Գաղղիա:

Շարունակելի

ՌԱՓԱՅԷԼ ԵՂՈՒԱՐԴ ԴԱՐԱՄԵԱՆ

(Տես յ'էջ 88)

Խօսքերնուս կարգը կը բռնադատէ զմեզ՝ Եղուարդայ Ռափայելի մահուան ցաւալից արկածէն քիչ մը առաջ անցնիլ:

Բուզայեան վարդապետ Եղուարդայ որդւոցը հետ լոնտոն երթալէն ի վեր՝ ոչ միայն իրենց ազնուախոհ հօրը նպատակին հետեւելով անոնց դաստիարակութեանն ամէն հնարաւոր փոյթ և խնամք կը ցուցընէր, այլ ուրիշ ոչինչ նուազ կարևոր փափաք մ'ալ կը սընուցանէր ի սրտին. և էր՝ ազգին աղքատ և անտէրունչ մանկութեան դաստիարակութեան գործը, օգտուելով Ղարամբանին առատամիտ ազգասիրութենէն և առ ինքն ցուցած բարեկամութենէն: Այս վախճանաւ այլևայլ նամակներ ուղղած է առ նա. և առանձինն ընդարձակ գրութիւն մը, բացատրելով այսպիսի բարերարութենէ մը յառաջ գալիք օգուտը ազգին ընդհանրութեան: Բուզայեանի այս գրութեան պատասխանն կու տայ Եղուարդ՝ 1729 փետրուարի 1 հետեւալ նամակաւ:

« Ի լոնտոնու (ուղղեալ վեց նամակք) և յատկապէս տետրակդ՝ գրեալն ի 26 հոկտեմբերի ուրք հասին ինձ. նախ ի վերայ առողջութեանդ քան զամենայն ուրախ եմ, և մխիթար լինելով, լիագոյն լըրոյ զաւակացս՝ զորոց զլուր տուեալ էիր ինձ: Նախ պատասխանեմ փոքր թղթոցդ, և ապա տետրակիդ՝ հատոր առ հատոր. զտետրակս գրոյդ՝ որում արժանապէս պատկանի պատասխանել... »

« Ի տետրակին գրեալ էիր վասն որդւոցս, զի թէ ոչ էիր ընդ նոսա՝ մոռացեալ լինէին զլեզուն սեղհական. աներկբայ գիտեմ՝ զի թէ չէիր ընդ նոսա՝ մոռացեալ էին. յայսմ մասին բարեպէս ճանաչեմ զերախտիս քոյ, և շնորհակալ եմ զքէն, զօր հանապազ յիշեմ և ոչ մոռանամ երբէք: Դարձեալ խնդրեմ ի հայրութենէդ և ծանուցանեմ վերապատուութեանդ զաւովական առակս թէ ի կիսկա-